



«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱԶԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ


Պ Ե Տ

«25» նոյեմբերի 2014թ.

Հաստատում եմ

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետի ժամանակավոր պաշտոնակատար

 Լ. Թունյան

N ՍՑ-ԳԲԽ-02/14 բողոքը քննող

հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 01.07.2014թ. N 1/18-2/610733-14 գրությամբ ներկայացված Ֆ/Ա Աննա Աղաջանյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, պարզել ենք հետևյալը.

**1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը**

ՀՀ ֆինանսների նախարարությունը 01.07.2014թ. N 1/18-2/610733-14 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝

հայտնելով, որ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և Ֆ/Ա Աննա Աղաջանյանի միջև 18.04.2014թ. կնքվել է արխիվացման ծառայությունների մատուցման պետական գնման «ՊԵԿ-ՇՀԾՁԲ-14-2-11/12-1» պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր), սակայն Ֆ/Ա Աննա Աղաջանյանը չի կատարել Պայմանագրով ստանձնած պարտավորությունը և Պատվիրատուն ստիպված է եղել 30.06.2014թ. թիվ-1/18-2/8145-14 գրությամբ միակողմանի լուծել Պայմանագիրը:

Գրությունում նշվել է, որ Պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետում և Պայմանագրի 3.1 կետով սահմանված կարգի համաձայն՝ Ֆ/Ա Աննա Աղաջանյանը պարտավոր էր մինչև 2014թ. հունիսի 2-ը Պատվիրատուին հանձնել պահպանության ոչ ենթակա 12000 փաստաթղթերի առանձնացման և ոչնչացման ակտեր, ինչպես նաև մինչև 2014թ. հունիսի 2-ը ներկայացնել Պատվիրատուի աշխատակազմին վերաբերող 20 գործերի ցուցակ:

Նկատի ունենալով, որ Պայմանագրով սահմանված ժամկետում Ֆ/Ա Աննա Աղաջանյանի կողմից վերը նշված պարտավորությունները չեն կատարվել, Պատվիրատուն, հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 ենթակետով սահմանված դրույթները, 30.06.2014թ. թիվ-1/18-2/8145-14 գրությամբ Պայմանագիրը միակողմանի լուծել է:

Կենտրոնը 23.10.2014թ. N 04/032-1702 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և հայտնել է, որ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից Ֆ/Ա Աննա Աղաջանյանի հետ կնքված N «ՊԵԿ-ՇՀԾՁԲ-14-2-11/12» ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծելու հիմքով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջին համապատասխան ՀՀ ֆինանսների նախարարությունը Ֆ/Ա Աննա Աղաջանյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնել ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում:

Կենտրոնը վերը նշված գրությամբ խնդրել է սեղմ ժամկետում «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարության կարծիքը:

ՀՀ ֆինանսների նախարարությունը 30.10.2014թ. N 1/18-2/18844-14 գրությամբ ներկայացրել է հետևյալ կարծիքը.

Համաձայն Պայմանագրի ծառայությունների հանձման և ընդունման կարգի 3-րդ դրույթի, Կատարողը պարտավոր էր տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված ժամկետում՝ 02.06.2014թ., Պատվիրատուին հանձնել մատուցված ծառայությունների մասին իր կողմից ստորագրված հանձման-ընդունման երկու օրինակ: Սակայն, պայմանագրով նախատեսված ժամկետում Ֆ/Ա Աննա Աղաջանյանը չի ներկայացրել պահանջվող փաստաթղթերը՝ բերելով անհիմն պատճառաբանություններ:

Ֆ/Ա Աննա Աղաջանյանը պնդել է, որ ինքը չորս մաքսատներում ավարտել է փաստաթղթերի կարգավորման աշխատանքները, մինչդեռ, արխիվային կանոնների համաձայն, աշխատանքի ավարտ է համարվում, երբ կազմվում է տվյալ կազմակերպության անձնակազմին վերաբերող գործերի ցուցակները (որոնք պահվում են 50 տարի), որից հետո միայն կազմվում է ոչնչացման համար առանձնացված փաստաթղթերի ակտը: Ֆ/Ա Աննա Աղաջանյանը չորս մաքսատներից և ոչ մեկում չի կազմել անձնակազմի վերաբերյալ ցուցակները:

Ֆ/Ա Աննա Աղաջանյանի կազմած ակտերում հայտնաբերվել են բազմաթիվ թերություններ, հավելագրումներ և կեղծիքներ, ինչի պատճառով նրա մասնագիտական պիտանելիությունը պարզելու նպատակով Զվարթնոց մաքսատան ոչնչացման համար առանձնացված փաստաթղթերի ակտն ուղարկվել է Հայաստանի ազգային արխիվ՝ մասնագիտական եզրակացություն տրամադրելու համար:

Ստացված եզրակացությունում նշվել է հետևյալը.

«Վերոնշյալ ակտի ձևը սահմանված է ՀՀ կառավարության 2005թ. հունիսի 23-ի N 932-Ն որոշմամբ: Կառուցվածքային առումով ակտի ձևը համապատասխանում է նշված որոշմանը: Բովանդակային առումով Հայաստանի ազգային արխիվն ունի մի շարք դիտողություններ, որոնք ներկայացվում են ստորև.

- Ակտի 2-րդ սյունակում նշված է «Կառուցվածքային ստորաբաժանումների անվանումները և գործերի վերնագրերը», սակայն գործերի վերնագրերը շարադրված են խառը՝ առանց հաշվի առնելու, թե դրանք որ կառուցվածքային ստորաբաժանման

փաստաթղթեր են՝ ընդհանուր բաժնի (գրասենյակի), հաշվապահության, թե մաքսային գործառնություններ իրականացնող ստորաբաժանման:

- NN 4 և 8 կետերի 5-րդ սյունակում արված 5/ՓՀ նշումը անթույլատրելի է: Ըստ էության նման նշումը նշանակում է, որ կազմակերպության փորձագիտական հանձնաժողովը որոշում է կայացնում տվյալ փաստաթղթերի պահպանման ժամկետի մասին: Մինչդեռ, փորձագիտական հանձնաժողովը նման գործառնությո չունի: Հանձնաժողովը կարող է առաջարկություն ներկայացնել և ոչ թե որոշում ընդունել:

- NN 9, 18, 20, 23, 25, 26, 29 կետերի «ծանոթագրություն» սյունակում պետք է կատարվի համապատասխան նշում ըստ «Պահպանության ժամկետների նշումով արխիվային փաստաթղթերի օրինակելի ցանկի»: Օրինակ՝ ցանկի N 347 կետով ոչնչացման ենթակա փաստաթղթերի «ծանոթագրություն» սյունակում պետք է նշվի «Մաքսային հսկողությունը չավարտված հայտարարագրերն առանձնացվել են՝ ցանկը կցվում է», N 345 կետով ոչնչացման ենթակա փաստաթղթերի «ծանոթագրություն» սյունակում պետք է նշվի «Հիմնադիր փաստաթղթերը պահպանված են» և այլն:

- NN 10, 19, 20, 21, 22 կետերով նախատեսված գործերի վերնագրերը մեր կարծիքով բովանդակային առումով չեն համապատասխանում ակտի 5-րդ սյունակում նշված համապատասխան կետերին: Դրանք կարելի է պարզել տեղում այս կամ այն փաստաթղթի կոնկրետ ուսումնասիրությունից հետո:

- N 23 կետի 4-րդ սյունակում նշված գործերի քանակը (4332 գործ) ակնհայտորեն ուռճացված է: Առավելապես ենթադրելի է, որ դրանք ոչ թե արտաքին տնտեսական գործունեություն իրականացնողի գործեր են, այլ ֆիզիկական անձանց վերաբերող փաստաթղթեր են (հայտարարագրեր, ապրանքնագրեր, անձնագրի պատճեններ և այլն):

- NN 22 և 27 կետերի 5-րդ սյունակում ըստ էության նշված է պահպանության 2 ժամկետ: Նման բան որպես կանոն չի թույլատրվում: Նաև այս կետում նշված «փոխադարձ հաշվարկների ակտերը» ոչնչացվում են «Պահպանության ժամկետների նշումով արխիվային փաստաթղթերի օրինակելի ցանկի» 171-րդ կետի համաձայն:

- N 28 կետում ՈԻՄՀ հապավումը հասկանալի չէ, ինչպես նաև վերոնշյալ ցանկի 348-րդ կետի հետ բովանդակային առումով կապ չունի:»

Ստացված եզրակացությունից Պատվիրատուն հանգել է այն հետևության, որ Ֆ/Ա Աննա Աղաջանյանի կողմից մատուցվել են որոշակի ծավալի ծառայություններ, սակայն դրանք չեն համապատասխանել նման ծառայություններին ներկայացվող պահանջներին:

Պատվիրատուն Կենտրոնին է ներկայացրել նաև ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի 17.06.2014թ. N 4/7 որոշումը, որով մերժվել է 14.05.2014թ. քաղաքացի Աննա Աղաջանյանի դիմում-գանգատը:

Կենտրոնում 23.07.2014թ. ժամը 15:00-ին կազմակերպված քննարկման ժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչները պնդել են 30.06.2014թ. N 1/18-2/8145-14 գրությամբ ներկայացված փաստարկները և հայտնել են, որ Ֆ/Ա Աննա Աղաջանյանը «ՊԵԿ-ՇՀԾՁԲ-14-2-11/12-1» ծածկագրով արխիվացման ծառայությունների մատուցման Պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետում և Պայմանագրի 3.1 կետով սահմանված կարգով պարտավոր էր մինչև 02.06.2014թ. Պատվիրատուին հանձնել պահպանության ոչ ենթակա 12000 փաստաթղթերի առանձնացման և ոչնչացման ակտերը, ինչպես նաև մինչև 02.06.2014թ. ներկայացնել աշխատակազմին վերաբերող 20 գործերի ցուցակը, որպիսի պայմանագրով ստանձնած պարտավորություններն Ֆ/Ա Աննա Աղաջանյանի կողմից սահմանված ժամկետում չեն կատարվել, որն էլ հանգեցրել է Պատվիրատուի կողմից 30.06.2014թ. Պայմանագրի միակողմանի լուծմանը:

Ի պատասխան Կենտրոնի 31.10.2014թ. N 04/032-1740 գրության, ՀՀ ֆինանսների նախարարությունը 12.11.2014թ. N 1/18-2/698186-14 գրությամբ հայտնել է, որ պայմանագրային պարտավորությունները խախտելու հետևանքով Ֆ/Ա Աննա Աղաջանյանի նկատմամբ հաշվարկվել է Պայմանագրի կատարման ապահովման 399715 (երեք հարյուր իննսունինը հազար յոթ հարյուր տասնհինգ) ՀՀ դրամի չափով տուժանք, Պայմանագրի 5.2 կետով՝ 19985.75 (տասնինը հազար ինը հարյուր ութսունհինգ) ՀՀ դրամի չափով տուգանք և Պայմանագրի 5.3 կետով՝ 17920 (տասնյոթ հազար ինը հարյուր քսան) ՀՀ դրամի չափով տույժ:

Միաժամանակ վերոնշյալ գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ Ֆ/Ա Աննա Աղաջանյանը մինչ օրս նշված գումարները չի փոխանցել ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետարանի հաշվեհամարին:

## **2. Ֆ/Ա Աննա Աղաջանյանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը**

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետը, կարծիք ստանալու նպատակով 08.07.2014թ. N 010/032-1184 գրությամբ դիմել է Ֆ/Ա Աննա Աղաջանյանին: Ֆ/Ա Աննա Աղաջանյանը Կենտրոնին հասցեագրված 08.07.2014թ., 10.07.2014թ., 11.07.2014թ. և 15.07.2014թ. դիմումներում նշել է, որ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի որոշումը՝ «ՊԵԿ-ՇՀԾՁԲ-14-2-11/12-1» ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, անհիմն է, քանի որ չի խախտել Պայմանագրով ստանձնած պարտավորությունները:

Ֆ/Ա Աննա Աղաջանյանը ներկայացրել է իր և ՀՀ ֆինանսների նախարարության միջև գրագրությունների պատճենները, որոնք, ըստ նրա փաստում են Պայմանագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը սխալ կազմված լինելու, իր կողմից պայմանագրային պարտավորությունները կատարելու և աշխատանքների կատարման համար ՀՀ ֆինանսների նախարարության կողմից արհեստական խոչընդոտներ առաջացնելու մասին:

Ֆ/Ա Աննա Աղաջանյանը հայտնել է նաև, որ «Արարատյան», «Զվարթնոց», «Միջազգային ճանապարհային փոխադրումների» և «Ակցիզային հարկով հարկվող ապրանքների» մասնագիտացված մաքսատներում Պայմանագրով սահմանված կարգով կատարել է արխիվացման աշխատանքները: «Միջազգային ճանապարհային փոխադրումների» և «Ակցիզային հարկով հարկվող ապրանքների» մասնագիտացված մաքսատներում կատարված արխիվացման աշխատանքների վերաբերյալ կազմվել և հաստատվել են աշխատանքների կատարումը հավաստող համապատասխան ակտեր: Սակայն, «Արարատյան» և «Զվարթնոց» մաքսատներում կատարված աշխատանքների կատարումը հավաստող ակտերը, որոնք իր կողմից մաքսատներին ներկայացվել էին

հաստատման, իրեն չեն վերադարձվել, ինչի պատճառով չի կարողացել Պատվիրատուին ներկայացնել համապատասխան ակտեր և դրանց հիման վրա կազմել ընդունման-հանձնման արձանագրություններ:

Կենտրոնում 23.07.2014թ. ժամը 15:00-ին կազմակերպված քննարկման ժամանակ Ֆ/Ա Աննա Աղաջանյանը չընդունելով Պատվիրատուի ներկայացրած փաստարկները, նշել է, որ իր կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունները պատշաճ կերպով կատարվել են, ինչի վերաբերյալ առկա են դրանց կատարումը հավաստող համապատասխան ակտեր:

Կենտրոնի այն հարցին, թե աշխատանքները կատարված լինելու դեպքում ինչու Պատվիրատուին չի ներկայացրել համապատասխան արձանագրությունները և չի կազմել աշխատանքների հանձնման-ընդունման ակտեր, Ֆ/Ա Աննա Աղաջանյանը պատասխանել է, որ իր կատարած աշխատանքների վերաբերյալ կազմված ակտերն «Արարատյան» և «Զվարթնոց» մաքսատները չեն հաստատել և իրեն չեն վերադարձրել, ինչի արդյունքում էլ չի կարողացել դրանք ներկայացնել Պատվիրատուին, որի պատճառով էլ հնարավոր չի եղել կազմել հանձնման-ընդունման արձանագրությունները:

### **3. ՍՑ-ԳԲԽ-02/14 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**

ՀՀ ֆինանսների նախարարության 01.07.2014թ. N 1/18-2/610733-14 գրությամբ ներկայացրած Ֆ/Ա Աննա Աղաջանյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից արխիվացման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է N «ՊԵԿ-ՇՀԾՁԲ-14-2-11/12» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

2. Ընթացակարգի արդյունքում ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի և Ֆ/Ա Աննա Աղաջանյանի միջև 18.04.2014թ. կնքվել է արխիվացման ծառայությունների մատուցման «ՊԵԿ-ՇՀԾՁԲ-14-2-11/12-1» գնման պայմանագիր, որի թիվ 1 հավելվածով ծառայությունների մատուցման վերջնաժամկետ է սահմանվել մինչև 01.10.2014թ.:

Պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, սահմանվել է հետևյալ ծառայությունների մատուցումը.

- 1-ին չափաբաժնով՝ մշտական պահպանության 100 գործերի առանձնացում և ձևավորում: Նախատեսված ծառայությունը պետք է մատուցվեր Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված մինչև 01.07.2014թ.:

- 2-րդ չափաբաժնով՝ անձնակազմին վերաբերող 20 գործերի առանձնացում և ձևավորում: Նախատեսված ծառայությունը պետք է մատուցվեր Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված մինչև 02.06.2014թ.:

- 3-րդ չափաբաժնով՝ պահպանության ոչ ենթակա փաստաթղթերի առանձնացում և ոչնչացման ակտի կազմում, հետևյալ քանակներով՝ 6000, 6000, 6000, 6000, 6000 և 5275: Նախատեսված ծառայությունները պետք է մատուցվեին Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված համապատասխանաբար՝ մինչև 05.05.2014թ., 02.06.2014թ., 01.07.2014թ., 01.08.2014թ., 01.09.2014թ., 01.10.2014թ.:

3. Ֆ/Ա Աննա Աղաջանյանը 23.04.2014թ. թիվ 7034-14 գրությամբ դիմել է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի ղեկավար Ա. Գևորգյանին և հայտնել, որ ըստ Պայմանագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի՝ պահպանության ոչ ենթակա առաջին 6000 գործերը պետք է հանձնվեն 05.05.2014թ, որը ժամկետի տեսանկյունից հնարավոր չի իրականացնել:

Վերոհիշյալ գրությամբ Ֆ/Ա Աննա Աղաջանյանը խնդրել է երկարաձգել պահպանության ոչ ենթակա առաջին 6000 գործերի հանձնման ժամկետը:

4. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի և Ֆ/Ա Աննա Աղաջանյանի միջև 12.05.2014թ. կնքվել է Պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին թիվ 1 համաձայնագիրը, որի 1.1 կետով փոփոխվել է Պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, /Պահպանության ոչ ենթակա փաստաթղթերի առանձնացում և ոչնչացման ակտի կազմում/ ծառայության 1-ին

խմբաքանակի 6000 գործ մատուցման ժամկետը և ծառայության մատուցման ժամկետ է սահմանվել մինչև 2014թ. հունիսի 2-ը:

5. Ֆ/Ա Աննա Աղաջանյանի կողմից մինչև 02.06.2014թ. չեն մատուցվել պայմանագրով նախատեսված անձնակազմին վերաբերող 20 գործերի առանձնացման և ձևավորման ցուցակը և պահպանության ոչ ենթակա 12000 փաստաթղթերի առանձնացման և ոչնչացման ակտի կազմման ծառայությունները:

6. Պատվիրատուն 12.06.2014թ. N 1-1/7078-14 գրությամբ դիմել է Ֆ/Ա Աննա Աղաջանյանին և հայտնել, որ վերջինս պարտավոր էր մինչև 02.06.2014թ. Պատվիրատուին հանձնել պահպանության ոչ ենթակա 12000 փաստաթղթերի առանձնացման և ոչնչացման ակտեր, ինչպես նաև մինչև 02.06.2014թ. ներկայացնել անձնակազմին վերաբերող 20 գործերի ցուցակը: Պատվիրատուն հայտնել է նաև, որ Պայմանագրի 5.2 և 5.3 կետերի համաձայն՝ Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման պահանջները խախտելու համար, միաժամանակ առաջարկելով Ֆ/Ա Աննա Աղաջանյանին երկօրյա ժամկետում ներկայացնել վերոնշյալ փաստաթղթերը, որոնք սահմանված ժամկետում Ֆ/Ա Աննա Աղաջանյանի կողմից դարձյալ չեն ներկայացվել:

7. ՀՀ ֆինանսների նախարարության 30.06.2014թ. N 1/18-2/8145-14 գրությամբ Ֆ/Ա Աննա Աղաջանյանի հետ կնքված Պայմանագիրը 2.1.3 կետի հիմքով միակողմանի լուծվել է:

8. Պայմանագրային պարտավորությունները խախտելու հետևանքով Ընկերության նկատմամբ հաշվարկվել է ՀՀ պետական բյուջե գանձման ենթակա 437620,75 ՀՀ դրամ, որից 399715 ՀՀ դրամը՝ որպես Պայմանագրի կատարման ապահովման համար նախատեսված տուժանք, 19985,75 ՀՀ դրամը՝ որպես Պայմանագրով ստանձնած պարտավորությունները ոչ պատշաճ կատարելու համար հաշվարկված տուգանք և 17920 ՀՀ դրամը՝ որպես տույժ:

9. ՀՀ ֆինանսների նախարարությունը 12.11.2014թ. N 1/18-2/698186-14 գրությամբ հայտնել է, որ Ֆ/Ա Աննա Աղաջանյանը մինչ օրս հաշվարկված տույժը կամ տուժանքը չի փոխանցել ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետարանի հաշվեհամարին:

**4. ՍՑ-ԳԲԽ-02/14 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը**

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծարմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև՝ Կարգ) 149-րդ կետի 5-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշման հիման վրա մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երեք տարի ժամկետով, եթե ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որի հետևանքով պատճառված վնասի, հաշվարկված տույժի կամ տուժանքի չափը չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը կամ նույն կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերով նախատեսված վնասը, հաշվարկված տույժը կամ տուժանքը չի վերականգնվել մինչև բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում ընդունվելը:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել նույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է նույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում նույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Պայմանագրի 3.1 կետի համաձայն՝ Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ:

Կատարողը ծառայության մատուցման ավարտից հինգ աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է հանձնում մատուցված ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ:

Պայմանագրի 3.2 կետի համաձայն՝ արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար նույն պայմանագրով նախատեսված միջոցները,

բ) Կատարողի նկատմամբ կիրառվում է նույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

Այսպիսով, Ֆ/Ա Աննա Աղաջանյանի կողմից թույլ են տրվել Պայմանագրով նախատեսված արխիվացման ծառայությունների մատուցման ժամկետների խախտումներ՝ մինչև 02.06.2014թ. Պատվիրատուին չի հանձնվել անձնակազմին վերաբերող 20 գործերի ցուցակը և պահպանության ոչ ենթակա 12000 փաստաթղթերի առանձնացման և ոչնչացման ակտերը:

Նկատի ունենալով, որ Ֆ/Ա Աննա Աղաջանյանի կողմից Պայմանագրով նախատեսված պարտավորությունն ավելի քան մեկ անգամ խախտվել է և Պայմանագրով ստանձնած պարտավորությունների վերոնշյալ խախտումները հանգեցրել են Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծմանը, որի

հետևանքով հաշվարկված տույժը և տուժանքը մինչև բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում ընդունվելը չի վերականգնվել, ուստի գտնում ենք, որ առկա են հիմքեր Ֆ/Ա Աննա Աղաջանյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու համար:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք ՀՀ ֆինանսների նախարարության 01.07.2014թ. N 1/18-2/610733-14 գրությամբ Ֆ/Ա Աննա Աղաջանյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը բավարարել՝ Ֆ/Ա Աննա Աղաջանյանին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կողմից որոշումը կայացնելու օրվանից հաշված մեկ տարվա ընթացքում Ֆ/Ա Աննա Աղաջանյանի կողմից գնումների գործընթացին մասնակցելու հայտ ներկայացնելու դեպքում, այդ պահից հաշված երեք տարի ժամկետով:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝



Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական  
խորհրդատվության վարչության պետ՝




Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և  
ահագանգման բաժնի վարիչ՝



Դ. Դավթյան

Գնումների բողոքարկման և  
ահագանգման բաժնի գլխավոր  
մասնագետ՝ ՍՑ-ԳԲԽ-02/14 բողոքը  
քննող հանձնաժողովի քարտուղար՝



Լ. Հովակիմյան